**Նախագիծ**

**Երկրորդ ընթերցում**

**Լրամշակված տարբերակ**

**Կ-086-09.11.2021-ՏԵ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Օ Ր Ե Ն Ք Ը
# «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» 2001 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-145 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի «դիտարկումների պետական ցանցի հենակետային օբյեկտներ» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«հիդրոօդերևութաբանական տեղեկատվություն արտադրող անձանց պետական ռեեստր (այսուհետ՝ պետական ռեեստր)՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի բ) և գ) կետերով սահմանված մարմինների և անձանց, նրանց կողմից կատարված աշխատանքների ու մատուցած ծառայությունների, ինչպես նաև 20-րդ հոդվածով սահմանված տեղեկատվության վերաբերյալ տվյալների ամբողջություն:»:

**Հոդված 2.** Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» կետով.

«դ) սահմանում է հիդրոօդերևութաբանական տեղեկատվություն արտադրող անձանց պետական ռեեստրի վարման, հիդրոօդերևութաբանական տեղեկատվություն արտադրող անձանց, նրանց կողմից կատարված աշխատանքների ու մատուցած ծառայությունների, ինչպես նաև հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվությունը պետական ռեեստրում ներառելու կարգը»:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժե» կետով.

«ժե) հիդրոօդերևութաբանական տեղեկատվություն արտադրող անձանց պետական ռեեստրի վարումը»:

**Հոդված 4. Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված կարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

*լրամշակված փարբերակ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Օ Ր Ե Ն Ք Ը**

«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» 2001 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-145 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի «դիտարկումների պետական ցանցի հենակետային օբյեկտներ» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«հիդրոօդերևութաբանական տեղեկատվություն արտադրող ~~ծառայություններ մատուցող~~ անձանց պետական ռեեստր (այսուհետ՝ պետական ռեեստր)՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի բ) և գ) կետերով սահմանված մարմինների և անձանց, նրանց կողմից կատարված աշխատանքների ու մատուցած ծառայությունների, ինչպես նաև 20-րդ հոդվածով սահմանված տեղեկատվության ~~տեղեկությունների~~ վերաբերյալ տվյալների ամբողջություն:»:

**Հոդված 2.** Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» կետով.

«դ) սահմանում է հիդրոօդերևութաբանական տեղեկատվություն արտադրող ~~ծառայություններ մատուցող~~ անձանց պետական ռեեստրի վարման, հիդրոօդերևութաբանական ծառայություններ մատուցող անձանց, նրանց կողմից կատարված աշխատանքների ու մատուցած ծառայությունների, ինչպես նաև հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվությունը պետական ռեեստրում ներառելու կարգը»:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժե» կետով.

«ժե) հիդրոօդերևութաբանական տեղեկատվություն արտադրող ծառայություններ մատուցող անձանց պետական ռեեստրի վարումը»:

**Հոդված 4. Անցումային ~~և եզրափակիչ~~ դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված կարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-086-09.11.2021-ՏԵ-011/1)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Օրենքի նախագիծը կամ օրենքի նախագծի մասը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հեղինակի վերաբերմունքը | Առաջարկու-թյուններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ կառավարություն | **Նախագծի վերնագիր** | Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը: | Ընդունվել է, Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |
| 2. | ՀՀ կառավարություն | **Նախագծի ամբողջ տեքստ** | Նախագծի ամբողջ տեքստում «ծառայություններ մատուցող» բառերը փոխարինել «տեղեկատվություն արտադրող» բառերով | Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |
| 3. | ՀՀ կառավարություն | **Հոդված 1-ին** | Նախագծի 1-ին հոդվածով լրացվող հասկացության սահմանման մեջ | Ընդունվել է Կատարվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «12-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1-ին մասի» բառերը, «տեղեկությունների» բառը փոխարինել «տեղեկատվության» բառով: | համապատասխան փոփոխություն | |
| 4. | ՀՀ կառավարություն | **Հոդված 4-րդ** | Հոդվածի վերնագրից հանել «և եզրափակիչ» բառերը: | Ընդունվել է, Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |